

ՀՈԳԵԹՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

ՓՈՆՆԱԿ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԵՐԵԻՈՒՅԹ (SURROGACY) ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՄԻ ՆԵՐՔՈ

1978 թ. ամերիկացի երկու գիտնականի հաջողվեց կենսաբանական ծնողներից բեղմնավորված սաղմը փոխադրել առողջ կնոջ օրգանիզմում՝ այդպիսով ապահովելով արհեստական բեղմնավորման բոլորովին նոր մի ձև, որին փոխվեց փոխնակ (surrogate motherhood) մայրություն անվանումը: Գիտական գյույրից շատ չանցած ամենապարբեր կրոնական եւ ոչ կրոնական փեսակերներ արտահայտվեցին, որոնք փորձում էին կամ ողջունել, կամ էլ քննադատել մարդկային մարմնի այս նոր «թոփքը»...

1987 թ. Կաթոլիկ Եկեղեցու «Նավարի ուսուցման եւ քննության հանձնախումբը» (Congregatio pro Doctrina Fidei) Կաթոլիկ ժողովի Ռաբինգերի (այժմ՝ Նոմի պապ Բենեդիկտոս ԺԶ.) հեղինակավոր ստորագրությամբ հրապարակեց մոտ 40 էջանոց մի վերլուծություն՝ Donum Vitae (Տիրոջ պարգևած կյանքը, այսուհետ՝ DV) խորագրով¹: Փաստաթղթում, իբրեւ քննության բարոյական հիմք եւ չափանիշ ընդունելով մարդկային կյանքի անձեռնմխելիությունը, դատապարտվում էր մարդկային վերաբրադրողականության ցանկացած փոխնակական միջամտություն (DV § 4), ներառյալ նաեւ փոխնակ մայրությունը: 2005 թ. Ռուս Ուղղափառ Եկեղեցու «Սոցիալական հայեցակարգի հիմունքներ» փաստաթղթում նույնպես դատապարտվեց փոխնակ մայրությունը՝ իբրեւ ընդհանրիվ վերաբերյալ քրիստոնեական պարկերացմանը հակասող երևույթ (XII 4)²: Բիչ ավելի ուշ, 2008 թվականին «Symposium: Religion in assisted reproduction» պարբերականում Մեծագայայի եւ Լավրենտիկի մեկտալիա, Նուսաստանի Օրթոդոքս Եկեղեցու Սրբազան սինոդի բիտեթիկայի հարցերով հանձնախմբի նախագահ Դ-ր. Նիկողայոս Խաչինիկոյան մոտ 30 էջանոց զեկույցով ներկայացրեց Նույն Ուղղափառ Եկեղեցու փեսակերը մարդկային վերաբրադրողական միջոցների վերաբերյալ, որտեղ արտահայտվեցին սաղմնավորման մասին մասնավորապես ասվում է. «Վերն ասվածը հաստատում է, որ արտահայտվող այն սաղմնավորման բոլոր ժամանակակից միջոցները ենթակա են էթիկական եւ հոգեւոր չափորոշիչների, որոնք Եկեղեցուն սպիտակ են որոշակի վերապահումներ արտահայտել այս հարցի վերաբերյալ...»³: Վերջապես 2012 թ. հունվարի 2-ին Բուլղարիայի Օրթոդոքս Եկեղեցու Սրբազան սինոդը դատապարտեց արտահայտվող այն սաղմնավորումն ու փոխնակ մայրությունը՝ իբրեւ «սրբապաշտություն եւ աստվածահայեցողություն»:

Իսկ ի՞նչ է փոխնակ մայրությունը, ի՞նչ առանձնահատկություններ ունի արտաարգանդային սաղմնավորման երևույթը: Փորձենք հասկանալ այն⁴:

ա. IVF կամ Արտաարգանդային սաղմնավորում (այսուհետք՝ ԱՎՍ)

Արտաարգանդային սաղմնավորումը ներկայումս լայն տարածում է ստացել աշխարհում. առկա են հազարավոր ընկերություններ և կլինիկաներ, որոնք զբաղվում են ԱՎՍ-ով: Արտաարգանդային սաղմնավորումը, սովորաբար, իրականացվում է հինգ հիմնական փուլերով.

- Նախ հավաքվում և համապատասխան հորմոնային ակտիվության բնութային են ենթարկվում բազմաթիվ կանացի ձվաբջիջներ՝ կանացի մեկ դաշտանային ցիկլի ընթացքում:

- Այնուհետև միկրովիրաբուժական միջամտությամբ հավաքված ձվաբջիջները փրկադրվում են համապատասխան պահոցներում:

- Ապա արական սերմնաբջիջները հավաքվում և իրենց հերթին փրկադրվում են այսպես կոչված «սերմերի բանկերում»:

- Չորրորդ փուլի ընթացքում արդեն սաղմնավորման կամ ինսեմնացիայի միջոցով հատուկ լաբորատորիաներում արագացուցիչով կարարվում է արական և իգական սերմնաբջիջների զուգավորումը: Նաջող զուգավորումն ու արդյունքը հաստատում են համակարգչային հատուկ մոնիթորները:

- Վերջապես հինգերորդ փուլով մեկից վեց օրվա ընթացքում սաղմերը փրկադրվում են հղիության համար կարող փոխնակ մոր արգանդում: Այս փուլում արդեն սաղմերի թիվը հասցվում է երկուսից չորս բջիջի: Տեղադրման այս գործընթացն ուղեկցվում է ուլտրաձայնային ազդանշանով, ինչը երբեմն շարք ցավոք կարող է լինել փոխնակ մոր համար:

Ինչպես արդեն նշվեց, արտաարգանդային կամ *in vitro*⁵ բեղմնավորում առաջին անգամ իրականացրեցին Պարրիկ Սպեփտուն և Ռոբերտ Էդվարդսը (Բուրն Հոլլ, Քեմբրիջ) 1978 թ., երբ արտաարգանդային բեղմնավորման միջոցով կարողացան հաջողությամբ լույս աշխարհ բերել արտաարգանդային բեղմնավորմամբ ծնված առաջին մարդուն՝ Լուիզ Բրաունին: Չնայած թվացյալ հաջողությանն ու հեռանկարներին՝ այս երևույթն իրենց իսկ գյուրարար-բժիշկների խոսքով առաջ բերեց մի քանի հիմնահարցեր: Դրանցից ամենախնդրահարույցն ու կարևորը բազմակի սաղմնավորումն էր, այսինքն՝ բեղմնավորման ժամանակ մի քանի սաղմնային բջիջների օգտագործումը, որոնցից հընթացս միայն մեկն էր գործածական ու արդյունավետ դառնում, մյուսները մահանում էին: Երկրորդ կարևոր հարցն անվտանգ հղիության ապահովումն էր այն դեպքում, եթե գործածվեին մյուս՝ անօգտակար դարձած բջիջները, արդյո՞ք դրանով կարելի էր անվտանգ առաջ հղիություն և ծնունդ ապահովել: Երրորդ հարցն ավելի օրենսդրական էր և վերաբերում էր սերմերի ու սաղմերի օրինական փոխադրմանը մի երկրից մյուսը⁶:

բ. ԱԱՄ-ն բիոէթիկայի և օրենսդրության դաշտում

Ինչպես արդեն նշվեց, ԱԱՄ-ի երևույթն առաջ է բերում մի շարք լուրջ բիոէթիկական հարցեր: Նույնիսկ ԱԱՄ-ն իրականացնող ու զարգացնող բժիշկները կանգնում են այդ հարցադրումների առաջ: Կրկին կկամենայինք անդրադառնալ ԱԱՄ-ի փաստացի հիմնադիր Էդվարդսի՝ հերթական կոնֆերանսներից մեկի ժամանակ հնչեցրած հարցադրումներին.

ա. Ո՞րն է այն բարոյական չափանիշը, որին ազատորեն կամ հարկադրված պետք է հետևի գիտնականը, երբ իր փորձարկումների արդյունքում կարող է լուծել մարդկային կյանքի ու առողջության համար շար կարևոր խնդիրներ, նույնիսկ եթե դրանք նորանոր հարցերի առիթ են պալիս:

բ. Ո՞րն է այն բարոյական ուղեցույցը, որով պետք է առաջնորդվի փորձարար-բժիշկը ժողովրդավարական երկրում:

գ. Իրավունք ունի՞ արդյոք գիտնական-բժիշկը, առանց պետական արքունագրության սպասելու, գործադրել մարդկային կյանքն ու առողջությունը բարելավող միջոցները, որոնց արքունագրումը պարհներով ուշանում է պետական պարկան մարմինների կողմից⁷:

Ինչպես կարելի է նկատել, վերջին հարցն արդեն շոշափում է բիոէթիկական և օրենսդրական դաշտերի հարման այն շար նուրբ կետը, որի պարզառով երոպական մի շարք առաջապար երկրներում օրենսդրությամբ արգելված է ԱԱՄ-ի գործադրումը: Եւրոմիության երկրներում ԱԱՄ-ի օրինականացման վերաբերյալ չկա միապարտություն: Օրինակ, այն օրինական է Անգլիայում, մասամբ արգելված է Ֆրանսիայում և Գերմանիայում, և դեռևս անորոշ օրենսդրական վիճակում է Լեհաստանում⁸: 1991-1994 թթ. Ֆրանսիայի Ազգային ժողովի ընդունած բիոէթիկական օրենքներն սկզբնապես արգելում էին ԱԱՄ-ն, իսկ 2011 թ. ընդունած բիոէթիկական օրենքը մասամբ թույլաբերելով ԱԱՄ-ն, այնուամենայնիվ առավելություն է պալիս այն փխնոթգիաներին, որոնք հնարավորին սահմանափակում են օգրագործվող սաղմերի (embryon) քանակը: Միայն մեկ պարի առաջ Լեհաստանը կարողացավ որոշակի հստակություն մրցնել ԱԱՄ-ի գործադրման և օրինականացման գործընթացի մեջ: ՏՏ-ում «Մարդու վերարարդրողական առողջության և վերարարդրողական իրավունքների մասին» օրենքն ընդունվել է 2002 թ. դեկտեմբերի 11-ին, և լրացվել 2010 թ. հոկտեմբերի 25-ի և 2012 թ. մարտի 21-ի նախագահական որոշումներով: Ըստ այսմ, օրենքի 15-րդ հոդվածը վերաբերում է փխնակ մոր իրավունքներին ու փխնակ մայրության մանրամասներին: Օրենքով, սակայն, հստակ չեն որոշ բիոէթիկական մանրամասներ. օրինակ, օրենքի 15.9-ը սահմանում է. «Փխնակ մայրն իրավունք չունի հրաժարվել իրենից ծնված երեխային հանձնել սույն օրենքով սահմանված կարգով պայմանագիր կնքած անձանց՝ վերարարդրողականության օժանդակ փխնոթգիաներից օգրվող անձին կամ ամուսիններին»: Սակայն առավել քան պարզ է, որ փխնակ մայրության ընթացքում որոշակի հոգեբանական կապվածություն է սրելովում փխնակ մոր և սաղմի միջև, չնայած որ վերջինս գենետիկորեն չի պարկանում փխնակ մորը: Արդյոք միակողմանի չէ՞ օրենքն այս հարցում,

չի՞ ուրևահարվում մայրական զգացումն ու կնոջ իրավունքն ընդհանրապես: Կամ օրենքի 12.2-ը մարդու վերարտադրողականության օժանդակ արեխնություններից օգտվելու իրավունք է պալիս Մ օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ չգտնվող արդամարդուն կամ կնոջը՝ իր ցանկությամբ: Այսու, ինչպե՞ս է կարգավորվում ազգային գենոֆոնդի եւ ընդհանրապես սաղմի արտահանման ապահովագրումը, որը նաև ազգային անվտանգության ոլորտի հարցերի շարքին է պատկանում:

գ. Մի քանի վիճակագրական փաստեր

ԱՄՆ-ի իրականացման լաբորատոր աշխատանքների ու գործընթացների ժամանակ նույնպես ծագում են որոշ ռիսկային ու որակական հարցեր, որոնք բժիշկներին եւ բարոյագետներին անհանգստության առիթ են պալիս արդեն երկու պատմամյակից ավել: Խոսքը մասնավորապես վերարտադրողական առողջության կլինիկաներում կատարվող փորձերի ու գործողությունների ժամանակ արդյունավետության խիստ ցածր աստիճանի մասին է, ինչի հետևանքով, բնականաբար, օգտագործվող սաղմերի եւ նույնիսկ նորածին երեխաների համար չկա որեւէ ապահովագրող օրենք: Բերենք մի քանի փաստեր:

2002 թ. ԱՄՆ-ում վերարտադրողական առողջության 428 կլինիկաներից միայն 391-ն ունեին գործունեություն ծավալելու հավաստագիր: Դրանցում սրելովել էին 115.392 սերմնային կամ սաղմնային բանկեր, ընդունվել էր 33.141 պարվեր, ծնվել էր 45.751 երեխա: Արդյունքում մնացած 69.821 սաղմերը ոչնչացվել էին կամ օգտագործվել այլ, բնական բջիջներ արտադրելու գործընթացների համար: Մեկ տարի անց այս փաստը հաստատվեց նաև Օրգանալայի առողջապահության ինսպիտուրի կողմից: Գիտնականները խոստովանեցին, որ ԱՄՆ-ի ժամանակ գործածվող մարդկային սաղմերի միայն 10-20%-ն է պարպերում: Մնացածը դատապարտված է մահվան⁹:

Անցնող մի քանի տարիների ընթացքում վերարտադրողական առողջության կլինիկաներում ԱՄՆ-ում ծնվել է շուրջ 200.000 երեխա: 1138/101-ի փոխհարաբերությամբ այդ երեխաներն ունեն ի ծնն մարմնական թերություններ, այնինչ բնականոն ճանապարհով ծնված երեխաների ի ծնն մարմնական թերությունների հարաբերակցությունն է 4000/168: Այսինքն՝ վերարտադրողական առողջության կլինիկաներում ծնված երեխաների 9,4%-ն ունի ի ծնն մարմնական թերություններ, իսկ բնականոն ճանապարհով ծնված երեխաներից՝ միայն 4,5%-ը¹⁰:

դ. ԱՄՆ-ն քրիստոնեական բարոյականության լույսի ներքո

ԱՄՆ-ի երեսույթը քրիստոնեական բարոյականության եւ հավատի պրեսակյունից կարելի է դիտարկել երկու հիմնական մոտեցումով՝

ա. աստվածաբանական, որով հարցը բնավում է քրիստոնեական մարդաբանության եւ բիոէթիկայի, սեռաբնական եւ ամուսնական հարաբերությունների լույսի ներքո.

բ. հոգեւոր-բարոյական, երբ հաշվի են առնվում սաղմի իրավունքն ու կյանքի սրբազան բնույթը, փոխնակ մոր բարոյական իրավունքները եւ վերջապես այս հարցի շուրջ՝

բարոյախրավաբանական ոլորտի ու եկեղեցական իրավունքի փոխհարաբերությունները:

Մարդու հիմնական նպատակը, ըստ քրիստոնեական բարոյականության, իր նախնական Պապկերին՝ Աստծուն միանալն է, այսինքն՝ սրբացումն ու աստվածացումը¹¹: Նենց այս պարճառով էլ մարդու կյանքը, ծնունդն ու գոյությունն ընդհանրապես քրիստոնեությունը համարում է սրբազան մի իրողություն: Այս իմաստով քրիստոնեական մարդաբանության մեջ մեծապես կարևորվում է մարդու հոգեմաքմնական ամբողջականության պահպանումը, որը դրսևորվում է մարդու ձևավորման առաջին իսկ պահերից¹²: Քրիստոնեական մարդաբանության փաստացի հիմնադիր Ս. Գրիգոր Նյուսացին իր «Տեսություն ի մարդոյն կազմութիւն» երկում հրաշալիորեն ընդգծում է մարդու հոգևոր եւ մարմնավոր սկիզբերի միասնությունը. «Այլ իբրու զի մի է մարդն ոգով եւ մարմնով, ի մի գումարեալ գոյութիւն, մի գևորա եւ հասարակ գգոյութեանն սկիզբն ենթադրել, զի մի ինքն իւր երիցագոյն եւ կրօնեցագոյն լիցի, իբրու թէ մարմնականն յառաջանայցէ ի նմա եւ միսն վերջանայցէ»¹³: Այսպիսով, մարդկային սաղմն առաջին իսկ պահերից կրում է մարդկային բարոյական եւ աստվածային ծագման ինքնությունը, այն ամբողջական է իբրեւ աստվածաստեղծ մարդկային անձ եւ բնություն¹⁴: ԱԼԱՍ-ի ժամանակ, ինչպես արդեն րեսանք, ցանկալի արդյունքի հասնելու նպատակով ոչնչացվում են մի քանի սաղմեր: Ներկաբար, ուրահարվում է քրիստոնեական հավաքի կարևորագույն սկզբունքներից մեկը՝ մարդկային կյանքի սրբազան բնույթի անձեռնմխելիությունը: Այս իմաստով ԱԼԱՍ-ի ժամանակ կիրառվող նմանադիպ րեխնորոգիան հաճախ համեմարվում է արորի հեպ:

Նարցի հեպ սերտորեն առնչվում է նաեւ փոխնակ մայրության երեւոյթն ինքնին. փոխնակ մայրն այս ամբողջ գործընթացի ժամանակ պարզապես մի գործիք է, յուրաքանակ ինկուբատոր, որպեղ ներդրվում է կենսաբանական ծնողներից ստացված սաղմը, եւ որը գենետիկ որեւէ կապ չունի փոխնակ մոր հեպ: Արդյոք համապարասխանում է մայրության կամ հղիության նմանադիպ ընկալումը մոր կերպարի կամ ընդանիքի վերաբերյալ քրիստոնեական պատկերացման հեպ: Կարո՞ղ է արդյոք երբեւիցե Եկեղեցին թույլապրել մայրության **գործիքավորումը** հանուն մարդկության բարօրության զարգացող առաջապար րեխնորոգիաների, հնարավո՞ր կլինի երբեւէ ընդունել այն փաստը, որ փոխնակ մայրը մայրանում է ըստ նութարական պայմանագրի... Սրանք բարոյական յուրջ հարցեր են, որոնց պարասխան րալիս Եկեղեցին չի կարող դրսևորել երկմրանք ու հովվական հարկադրվածություն: Եկեղեցին քաջ գիտակցում է, որ հաճախ րեխնորոգիական առաջապար միջոցները պարզ ցանկությունները կարող են վերածել անրեղիպալի պահանջների, եւ որ այդ դեպքում արդեն Եկեղեցին ստիպված է լինելու մարդկանց հիշեցնել րեխնոկրապիկ գերությունից ազապագրվելու հոգևոր պայքարի մասին¹⁵:

Մյուս կողմից, սակայն, ամությունը երբեք էլ Եկեղեցում չի դիպվում իբրեւ մեղք կամ ամուսնալուծության առիք: Ընդհակառակը, մի կողմ թողնելով այդ երեւոյթի կենսաբանական անկապարությունը, Եկեղեցին դիպարկում է ամությունն իբրեւ Աստծո

կամքի արքայազնությունում ամուսնական գույգի կյանքում¹⁶: Այնուամենայնիվ, Եկեղեցին դեմ չէ ամուսնական վերացման գիտաբժշկական միջոցների կիրառմանը՝ հաշվի առնելով մանավանդ, որ երեխայի հայտնվելը կարող է էապես փոխել ամուսինների կյանքը, ավելի ամրացնել նրանց ընդհանրելիք հարկապես սոցիալապես ավելի նեղ շրջանակների սովոր հասարակություններում: Փոխնակ մայրության պարագային ամուսինների կյանքում առաջ է գալիս ոչ թե գիտաբժշկական, այլ մարդկային միջամտություն, ի հայտ է գալիս երրորդ կողմը՝ փոխնակ մայրը: Ինչքանով նրա առկայությունն ու հոգեբանական կապվածությունը կարող է դրական կամ բացասական ազդեցություն թողնել գույգի ներքին կյանքի վրա, դժվար է ասել: Քրիստոնեական բարոյական սկզբունքի համաձայն մայրության և հայրության ցանկությունն ընդհանրելիքում Աստուծո գողտրիկ արքայությունը վերակերպելու մի առիթ է՝ դրանով իսկ մասնակից դառնալով աստվածային առաքելությունը երկրի վրա: Բայց երբեք այդ ցանկությունը չպետք է դառնա այնպիսի եսասիրական ու ինքնուրույն, որ թանկի քրիստոնեական հավատի և բարոյականության բոլոր սահմաններն ու պարունակները: Քրիստոնյա հավատացյալ գույգը չի կարող հայր կամ մայր դառնալ մեկ ուրիշ մոր մայրական իրավունքի և մարդկային կյանքի սրբազան բնույթի վերացման ու ուրանալու հաշվին: Չի բացառվում նաև, որ մի օր ամուսիններն այլևս կգերադասեն, մարդկային կյանքի սրբազանության (desacralization) խելապարտության արդյունքում, մոտակա դեղատոմսից կամ առաջադարձ փոխարկների մարակարարման կլինիկայից գնել իրենց երեխայի ամբողջ գենետիկ փոփոխությունը՝ դրանով մեկընդմիջելով մարդ արարելու միջոցով Աստուծո նմանվելու և ընդհանրական եկեղեցի ստեղծելու շնորհից¹⁷:

Ե. Նովվական դիտարկումներ¹⁸

Եկեղեցի հաճախող և հոգևորականից խորհուրդ հարցնող շատ հավատացյալ գույգեր այդքան էլ փնտրելից չեն մարդու առողջության վերարտադրողական առաջադարձ փոխարկների¹⁹: Նենց այս պարզապես Եկեղեցին փնտրելից չեն, և նրանց այդ փոխարկների բոլոր դրական ու բացասական կողմերի մասին՝ հորդորելով սրբությանը պահել ամուսնության սրբազան պատկեր՝ միաժամանակ ապավինելով նաև Աստուծո շնորհի ու կամքի գործադրմանը: Վերարտադրողական այս բոլոր փոխարկները, այդ թվում նաև փոխնակ մայրությունը, ծագում և առաջ են գալիս Եկեղեցու կամքից անկախ, բայց Եկեղեցին ինքն իր հոգի առաջ պարտավորություն ունի հայտնելու դրանց դեմ իր ունեցած բոլոր թեր և դեմ փաստարկների, բոլոր այն ռիսկերի ու վտանգների մասին, որոնցով շատ հաճախ պայմանավորվում է այդ փոխարկների կիրառումը մարդկային կյանքում: Եկեղեցու վարդապետությունը պետք է արքայազնության վիճակում իր շնորհի համարժեք փաստարկներով համարժեք բացատրիկ հնազանդությամբ, և ոչ թե համուսն Եկեղեցու վարդապետության աստվածաբանական եզրերի ճշգրտության: Այս հարցում Եկեղեցուն իրենց կարևորագույն փնտրումն ու դերն ունեն ծխական քահանաները և խոստովանաբարները, ինչպես նաև հավատացյալի անձնական-անհատական աղոթքն ու Սրբազան խորհուրդներին մասնակցությունը: Պետք է հիշել, որ Եկեղեցին առաջադարձ

վերաբարադրողական փրկանությունների պարագային չունի հավաքացյալին Սուրբ Հաղորդությունից կամ եկեղեցական անդամությունից զրկելու սովորություն, բայց նաև որոշակի պարագրանքներ ու պարսավորություններ է փալիս բոլոր նրանց, ովքեր այդ պարագային շեղվել են եկեղեցու Սրբազան ավանդությունից ու հայտնվել անևանդի վիճակում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Պաշտոնական փաստաթղթի ամբողջական փնսյուր փնս www.vatican.va/roman_curia/congregations/cfaith/documents կայքէջում:

2 Տե՛ս “Основы Социальной концепции Русской Православной Церкви”, Москва, 2005:

3 “The Greek Orthodox position on the ethics of assisted reproduction” in Symposium: Religion in assisted reproduction, vol. 17, Suppl. 3 (2008), էջ 26:

4 Սյորբե ներկայացվող վերլուծություններն արվել են ըստ հետևյալ աշխատությունների՝ **The Hon. Mr. Justice M D Kirby**, “Bioethics of IVF-the state of the debate”, Journal of medical ethics, 1, 45-48 (1984); **Marha A. Field**, Surrogate Motherhood, Harvard University Press, Cambridge, Massachussetts, London, England, 1990; <http://www.cdc.gov/reproductivehealth/ART02/slideshow/slideshow05.htm>; **Ա. Ղաթիբյան**, «Մեր հասարակությունը դեմոգրաֆիկ ճգնաժամ է ապրում», 168 Ժամ, հուլիս 17, 2012; **M. Shanley**, Making Babies, Making Families: What matters most in an age of reproductive technologies, surrogacy, adoption, and same-sex and unwed parents, Beacon Press, Boston, 2001; **Dr. Karin Hammarberg**, IVF&Beyond for Dummies, Wiley Publishing Australia, 2001; **R. Deonandan, S. Green, A. van Beinum**, “Ethical concerns for maternal surrogacy and reproductive tourism”, Journal of Medical Ethics 38 (2012):

5 *In vitro* լարիներեն բառ է եւ նշանակում է «ապակու մեջ»: Անվանումը ծագում է բժշկական գործընթացի նախնական շրջանում հիմնականում ապակե փորձանոթների մեջ մշակվող բջիջների պահպանման եւ փոխանցման երեսույթից:

6 Տե՛ս **The Hon. Mr. Justice M D Kirby**, նշվ. աշխ., էջ 46:

7 Տե՛ս անդ, էջ 46-47:

8 Օրենսդրական հարցերի վերաբերյալ վերլուծությունների համար օգտագործվել են հիմնականում հետևյալ աշխատություններն ու փաստաթղթերը՝ **Sylvia Kubiak**, “Les aspects juridiques de la gestation pour autrui en droit compare: international européen, Pologne, France et Grande Bretagne”, Memoir présenté pour l’obtention du master II recherche droit de la santé medical et medico-social, Université Paris 8, année 2008/2009; «Conférence de la Haye de droit international privé», Doc. prel. no. 11, mars 2011, «Questions de droit international privé concernant le statut des enfants, notamment celles résultant des accords de maternité de substitution à caractère international»:

9 Տե՛ս www.LifeStyleNews.com:

10 Տե՛ս <http://www.cdc.gov/reproductivehealth>:

11 Տեն Մեսրոպ վրդ. Պարսաւյան, «Աւարիւածացւան քրիստոնեական աշխարհայրայրնք եւ Սուրբ Ներսէս Շնորհալին», «Էջմիածին» Թ., (2012), էջ 29-59:

12 Տեն **Антоний Метрополит Сурожский**, “Тело, Дух, Душа: Целостность человеческой личности”, Труды, т. 2, Практика 2007, էջ 855-867:

13 Ս. Գրիգոր Նյուսացի, *Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն*, Ս. Էջմիածին, 2008, գլ. IԱ., էջ 189. «Բայց եթէ այդպիսով մարդը մեկ է՝ հոգով եւ մարմնով, իբրեւ միագումար մի գոյություն, ուրեմն նրա սկիզբն էլ հասարակ գոյություն չհամարենք, որպեսզի նրա մեջ մեծ ու փոքրի հարց չծագի, մարմնականը չգերակշռի եւ հոգեւորն էլ փռելի վրա»:

14 Քրիստոնեական Վաղ եկեղեցու հայրերի վարդապետական պարկերացումները սաղմի վերաբերյալ ամփոփված են հետևյալ հիմնարար մենագրության մեջ՝ **Marie-Hélène Congourdeau**, *L'embryon et son âme dans les sources grecques (VI^e siècle av. J. C.-V^e siècle apr. J. C.)*, Collège de France-CNRS, coll. Monographies 26, Paris, 2007, էջ 96-130, 157-173, 287-300, 323-334:

15 Տեն **Dr. Nicolaus Metropolitan**, “The Greek Orthodox position...”, 28-32; **S. S. Harakas**, *The Orthodox Christian Tradition: Religious Beliefs and Healthcare Decisions*, in Park Ridge Center, 1999; **Նույնի**, *For the Health of Body and Soul: An Eastern Orthodox Introduction to Bioethics*, in www.goarch.org, 2000; **Dr. E. Clapsis**, *Human Dignity in Orthodox Theology*, in www.goarch.org, 2011:

16 Ըստ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու կանոնների՝ ամուլության պարճառաբանությամբ ամուսնալուծությունն արգելվում է, ինչպես վկայում են Փիլիպպոս առաքյալին վերագրված կանոնախմբի Ա. կանոնը եւ Շահապիվանի ժողովի Ե. կանոնը, (յրեն «Կանոնագիրք Հայոց», հր. Բ., քնն. բնագիր եւ ներած. Վ. Հակոբյանի, Երևան, 1971, էջ 42-43, «Կանոնագիրք Հայոց», հր. Ա., էջ 436-437): Նույն այս մտրեցումն առկա է նաեւ Սուրբ Գրիգոր Տաթեւացու ասրվածաբանության մեջ. «Չամուլ կինն ոչ է պարտ արձակել: Ասեմ թէ ոչ վասն Դ. պարճառի. նախ զի ոչ զհրեն զպարճառս ամուլեան, երկրորդ՝ զի եւ Սառայ եւ Աննա ամուլ էր. երրորդ՝ զի ոչ իւր կամաւ է. թորրորդ՝ թէպէտ զաւակ ոչ ինի, սակայն ի պոռնկութենէ խորշի», «Գիրք Հարցմանց», Երուսաղէմ, 1993, էջ 401-403: Եկեղեցին դարեր ի վեր ամուսնական զույգի որդեւնության եւ ամուլության հարցը լուծելու նպատակով իբրեւ այլընտրանք հավաքացյալներին փվել է որդեգրության միջոցը:

17 Տեն **Ա. Տէր-Միքէլեան**, «Պաակի Ս. Խորիուրդը», Երկերի ժողովածու, Ս. Էջմիածին, 2009, էջ 139-141:

18 Տեն **Dr. Nicolaus Metropolitan**, “The Greek Orthodox position...”, էջ 32:

19 Առաջարար րելիսնոլոգիաների նկարմամբ քրիստոնեական մոլրեցման յուրալրեսակ մի փորձ է արել Եկեղեցիների Համաշխարհային Խորիուրդը՝ *Transforming life*, vol. I, *Convergent Technologies*, vol. II, *Genetics, Agriculture and Human Life*, World Council of Churches և World Association for Christian Communication: